ասացեալ թէ Որ գնացեալ են ի պօստանն Պօխլուճայ եւ գիր են գրեալ. զայն գիրն բերեալ տայցեն յիս և ապա արձակեցից։ Եւ Նոքա ոչ կամեցան տալ զբաղում օրս եւ խնդրէին զփիլոնն. եւ նա ասաց թէ Ոչ է լինելոց, անհնարին՝ եթէ առանց թղթին այնմ արձակեցից զնա։ Եւ զայս լեալ Նոքա անճարակացեալ տարեալ ետուն զգիրն զայն ի ձեռս Նորա։ Եւ էր գիրն. Պատճառ գրիս, թվ. ՌՃԴ մեք Սուրբ Սարգսայ միաբան քահանայք եւ ժողովուրդք Սուրբ Էջմիածնայ հնազանդ եմք եւ Յովանէս վարդապետին Նոյնպէս, և Նորին առաջնորդութեանն մեզ վերայ մինչև ի մահ կամիմք. և այլ սոցին նման գրեալ էին։ Եւ Մարտիրոս վարդապետն տեսեալ զայս եւ ձայնեալ ի մերայնոցն թէ Դուք յայսմ բանիս գիտա՞կ էք որ այսպէս են գրեալ՝ Միաբան քահանայք եւ ժողովուրդք. եւ սոքա ասացին թէ Ոչ գիտեմք։ Քանզի ի ժամանակին յայնմ գնացեալ եղեն Նոքա, որ էին Էսիլի[1]) թոռ Խաչատուր երէցն եւ Ոսկան երէցն եւ Պարմախսուզն եւ Թըլթըլն եւ Պնեաթն եւ այլք, որ իւրեանց համախոհքն վասն նախանձու երիցանցն մեր և աթոռակալաց եւ իշխանացն մեր։ Զայս ասացեալ Մարտիրոս վարդապետին թէ Վաղեան օրն դատաստան կ'առնեմք և հարցանեմք ձեզ թէ Դուք գիտա՞կ էք այսմ իրի. և մերայինքս ասացեալ թէ Վարդապե՛տ, զայդ արասցես եւ մեք կոի՞ւ առնելոց եմք ընդ Նոսա, եւ Նոցա բանն կ'աւիրի՞ զփիլոնն ոչ տալով Նորա. իւրեանքն գիտեն, մեզ պէտք չէ կռիւ։ Եւ դարձեալ ասաց թէ Թո՛ղ զան Զ եկեղեցոյ իշխանքն և իրիցունքն և Նոցա առաջի արձակեմ եւ պատուէր ունիմ տալու, տամ և արձակեմ։ Եւ զայս լեալ Նոցա, անկանելով յայս գիհս և յայն գիհն, մինչև խաբանեաց զայս իր՝ թէ

1) Էսիլ.